

ՎԵՄ

Մատենաշար
Թիւ 8

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ
ՄՆԴՐԱՆԻԿԻ
ՄՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Երևան
2024

ԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային հերոս Ամդրամիկ Թորոսի Օգանեսանը մեր նոր պատմության| փառքի պսակը կազմող այն բացառիկ անհատականություններից է, որի անունը դեռևս իր կենդանության օրօք ձեռք է բերել լայն ճանաչում ու ժողովրդականություն: Ամդրամիկի հանդէպ պաշտամունքի աստիճանի հասնող սերն ու յարգանքն արտայայտուել է նրան «Լեռնային արծիւ», «Հայկական Գարիբալդի» անուանելով ու բազմաթիւ յուզառատ նրճեր յորինելով:

Իրենց հերթին՝ ժամանակակիցներն արձանագրել են Ամդրամիկի անսահման սերը դէպի հարազատ ժողովուրդը, նրա հոգատարությունը եւ յարգանքը իր զինուորներին նկատմամբ, անկեղծութիւնն ու անբասիր վարքը, արտակարգ զսպուածութիւնը անձնական կեանքում, ցանկացած մարտի հետ կապուած բոլոր անհրաժեշտ մանրութեան մախատեսումը, ամուր, գիտակցական կարգապահութիւնը, անկեղծութիւնը, անբասիր վարքը, եւ վերջապէս անձնական քաջութիւնը:

Դա է պատճառը, որ Ամդրամիկի կեանքի եւ գործունէության մասին վերջին հարիւրամեակում ստեղծուել են յուշագրութիւններ, փաստաթղթերի ժողովածուներ, հսկայածաւալ ուսումնասիրութիւններ ու կարծես թէ չկայ նրա կեանքին առնչուող ոչ մի անյայտ էջ: Բայց ընթերցողի դատին ներկայացուող Երուանդ Փանպոքեանի հերթական աշխատասիրութիւնից պարզուել է, որ մման էջերը բազմաթիւ են, քանզի մինչ օրս չեն տըպագրուել Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնական արխիւում պահուող Ամդրամիկի ինքնատիպ մանակներն ու գրութիւնները: Ուստի ներկայ ժողովածուն, որը կազմել է Հ.Յ.Դ. արխիւների ամխոնջ ուսումնասիրող Երուանդ Փանպոքեանը լրացնում ու ամբողջացնում է Ամդրամիկի մասին մինչ օրս առկայ վաւերագրերը:

Ժողովածուում հրապարակուող առաջին մամակները գրուել են Անդրանիկի կենսագրութեան ամենավայելուն դրուագներից մէկի՝ Տարօնի 1901 թ. հետոսական կոիւմերի մախօրէին, որոնք պակուեցին Մշոյ Առաքելոց վանքի պաշտպանութեամբ: Այդ կոուի մախապատրաստման եւ ապա վանքի պաշտպանութեան շրջանին վերաբերող միւթերին յաջորդում է Մասունի 1904 թ. հետոսական ասպտամբութեան մասին պատմող ամփոփ օրագրութիւնը: Այնուհետեւ հետագայ ծանօթ անցքներն են՝ Ախլաթով անցում դէպի Աղթամար, ապա Վան: Իսկ 1905 թ. մամակները հիմնականում պատմում են այն ջանքերի մասին, որ «Պարոյր» ծածկանունի տակ թարմութեամբ Անդրանիկը գործադրում էր Եւրոպայում զէնք գնելու եւ հայ-թարսարական բախումների ասպարէզ դարձած Կովկաս առաքելու ուղղութեամբ: Մակայն մրան անհանգստացնում էր այն իրողութիւնը, որ ուշադրութիւնը կենտրոնացնելով Կովկասի անցքերին, մոռացութեան է տրուում Երկիրը. «Ինձ այնպէս կ'երեսի, որ Կովկասի այս դժբախտութեան համար շատ ընկերներ գլուխնին կորսնցուցին եւ Երկիրը մտքերնին անգամ պիտի չրերեն: Մենք գալ տարուայ համար ոչ մի պատրաստութիւն չունինք: Եթէ այսպէս անհոգութեան տանք, Երկիր գտնուած[ն] ալ ձեռքերնուս կը կորսնցնենք»(1):

Անդրանիկի՝ մամակների երկրորդ մասը գրուած է հիմնականում Բուդղարիայից, սկսած 1906 թ. Մայիսից մինչեւ 1914 թ., ուր գրեթէ մէկ տասնամակնակ պիտի բնակուէր Անդրանիկը: Այստեղից ընկերներին գրած մամակներում կը շօշափուիմ այնպիսի կարեւոր խնդիրներ, ինչպիսիք էին զինական զնումները, Բուդղարիայի մէջ հաստատուելիք Հ.Յ.Դ. Ձիմուորական վարժարանը, հայ եւ մակեդոնացի յեղափոխականների միջեւ գործակցութեան սերտացումը եւայլն: 1907 թ. մա մասնակցում է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 4-րդ Ընդհանուր ժողովին, որը ընթացաւ Վիեննայում եւ տեւեց երկուսուկէս ամիս: Դրանից յետոյ մեկնում է Հունգարիայի (ներկայումս՝ Մլովակիայի) Պիշտիան առողջարան՝ յօդացաւերը բուժելու, ուստի եւ այդտեղից տարբեր հասցէներով մամակների մի ամբողջ փաթեթ է յղում իր ընկերներին: Դրանցում շօշափում էր բուժման համար դրամի անբաւարարութիւնը, որը իրեն շատ էր մեղում՝ վաճառականի կեղծ անձնագրով ներկայանալու համար. «Դրամը չուշացնէք. ամէն շաբաթ կը վճարենք. չունենամ դրամ՝ ուզեն, խայտառակութիւն ամենեցուն կը լինի, որովհետեւ վաճառական եմ եւ վաճառական կը ճանչնան»(2):

Դրանից յետոյ՝ 1908 թ. Հոկտեմբեր-Նոյեմբեր,՝ Յրանսիա, Փարիզ, կրկին զէնքի զնումներ, հաշուետութիւններ ծախսած գումարների եւ զէնքի ուղարկման ուղիների մասին: Անդրանիկը դժգոհում էր որ օտար լեզու

1.- Տե՛ս սոյն ժողովածուն, էջ 66:

2.- Տե՛ս սոյն ժողովածուն, էջ 121:

չգիտի. «Դժբախտաբար լնգու չեմ գիտեր. եթէ ոչ այս զինական գործի մէջ շատ յաջողութիւն կ'ունենայի»(3), ու կրկին յիշեցնում էր գումարի անբաւարարութիւնը. «Անաւասիկ այսօրուայ ձեռք փող չունենալը, նոյնպէս անախորժ ու զիս Փարիզի փողոցներումը՝ քաղցած կը թողու: Ես լաւ գիտեմ ունենալնիդ ու չունենալնիդ. անօթի մնալու ալ վարժ եմ կանուխէն: Սրանից վերջ այլեւս ձրիակներութիւն չեմ ընել, թէկուզ անօթի սատկիմ: ... Գիտցէք որ կամքի ստրուկ չեմ ու չեմ ալ լինելու»(4):

1910 թ. Յունուար-Մարտ, – Փարիզ, Մանչեստր, ամողջական խնդիրներ. «Առողջութիւնս լաւ չէ. ոտքիս ցաւով Մանչեստր պատկեցայ մի ամիս»(5), գումարի անբաւարարութիւն. «Ես կազմակերպութիւնից 14 ամիս է որ մի կուպէկ չեմ ստացած իմ ապրուստի համար: ... Բնձ համար մահ է որ ես սրանից վերջ հարուստ դասակարգի դիմեմ ու միութեան օգնութիւն խնդրեմ...»(6):

1910 թ. – Վառնա, հանգանակութիւն Մուշի եւ Մասունի համար, հանգանակած գումարների մասին հաշուետւութիւններ:

1911-1912 թթ., – անվտանգութիւն երիտթուրքական «յեղափոխութեան» նկատմամբ. «Ես ո՛ր, օսմանեան փառամենքի անդամ ըլլալը ո՛ր: Այդ ոճրագործներու վռնակները, որոնք հող նստած են, ես անոնց չեմ հաւատար եւ երկրորդ որ իմ գործս չէ հող գալ եւ այդ աթոռին վրայ նստիլ»: Ապա յայտնում է իր երազանքի մասին. «Ես կը փափաքիմ որ օր մը պատուով մեռնիմ: Ո՛չ այդ աթոռը, ո՛չ այդ պաշտօնը եւ ո՛չ ալ յիսուն օսմանեան ոսկի ամսականը կ'ուզեմ: Ջիս հանգիստ ձգեցէք իմ պուկկարական համեստ հիւղակին մէջ»(7):

Անդրանիկի նամակները պարունակում են նաեւ հարուստ միւթեր առօրեայ կենցաղի պատմութեան վերաբերեալ, պատկերացում են տալիս այն մասին, թէ ինչպէս են ապրել օսմանեան կայսրութեան դէմ պայքարի ելած մարդիկ, թէ ինչն է յուզել ռազմական գործողութիւնների թատերաբեմում գտնուող հայ ֆիդայիին:

Մոյն ժողովածուի գիտական եւ ճանաչողական լուրջ արժանիքներից մէկն էլ Երուանդ Փամպուքեանի աշխատասիրութեամբ կազմուած մանրակրկիտ բացատրութիւններն ու ծանօթագրութիւններն են, որոնք կենարար արին են հաղորդում յաճախ անխօս փաստաթղթերին, դրանք դարձնելով հասկանալի եւ անփոխարինելի սկզբնաղբիւր Հայոց պատմութեան համար:

3.- Տե՛ս սոյն ժողովածուն, էջ 141:

4.- Տե՛ս սոյն ժողովածուն, էջ 152:

5.- Տե՛ս սոյն ժողովածուն, էջ 178:

6.- Նոյն տեղում:

7.- Տե՛ս սոյն ժողովածուն, էջ 189:

Ամերիկայի մամուլների սոյն ժողովածուին մեջ ներառուած փաստաթղթերը նոր սկզբնաղբիւրներ են, որ առաջին անգամ են մտցում գիտական շրջանառութեան մէջ: Դրանց արժէքը մեծանում է մաեւ այն պատճառով որ Երուանդ Փամպուքեանի կողմից հրատարակուող վաւերագրերը բացայայտում են մեր ժողովրդի համար շրջադարձային ժամանակաշրջանի՝ 20-րդ դարի սկզբի բազմաթիւ հարցականներով ու վիճելի հարցերով ի պատմութեան խորը ծալքերը: Ուստի ընթերցողի դատին մերկայացուող Երուանդ Փամպուքեանի հերթական աշխատասիրութիւնը նոր խօսք է ու լուրջ աւանդ Հայոց պատմութեան ուսումնասիրութեան գործում:

ԱՄՍՏՈՒՆԻ ՎԻՐԱԲԵԱՆ
Պատմական գիտութիւնների դոկտոր